Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ

Edu Armenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման
դասընթաց **2022**

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինչպես ճիշտ ձևավորել դպրոցական երգչախումբ,որն էլ կօգնի բարձրացնել «Երաժշտություն» առարկայի դերն ու նշանակությունը հանրակրթական դպրոցներում

Հետազոտող ուսուցիչ՝ Լուսինե Մաթևոսյան

Դպրոց՝ Զարենցավանի N2 հիմնական դպրոց

Բովանդակություն

Ներածություն _____ 2

Երգչախումբ , դպրոցական երգչախումբ _____ 3

Երգչախմբային ծրագրի պահանջները և խմբերգային ստեղծագործության

վերլուծությունը և ուսուցման ձևերը _____ 5

Երգչական ձայներ _____ 7

Շնչառությունը , կեցվածքը երգեցողության ժամանակ _____ 9

Խմբավարի մասնագիտական պատրաստվածությունը _____ 10

Երգեցողության խնդիրները _____ 11

Խմբային երգեցողության դաստիարակչական նշանակությունը _____ 11

Եզրակացություն _____ 13

Օգտագործված գրականություն _____

14

Ներածություն

Երաժշտությունը բնության լավագույն բարիքներից է , այն ազնվացնում է շրջապատող աշխարհն ու մարդկանց : Շնորհիվ նրա, կյանքն իմաստավորվում է հոգեպես : Բազմաթիվ ուսումնասիրություններ ցույց են տվել , որ երաժշտություն սիրում են ոչ միայն մարդիկ , այլ նաև կենդանիները ու բույսերը :

Ամեն մի կյանք , կենդանի արարած երաժշտությունից ստանում է դրական լիցքեր : Եթե մարդկությունը պառակտվել է ազգությունների, լեզուների, մշակույթների, ապա երաժշտության լեզուն մնացել է միակը: Ուրեմն այդպես է կամեցել Աստված: Այն բոլոր հոգիների բանալին է, և պետք է կարողանալ նրանից օգտվել:

Վերածնդի ժամանակաշրջանում արվեստի նկատմամբ բարենպաստ վերաբերմունք էր ստեղծված : Ի հայտ եկան տաղանդավոր երգահաններ, գրողներ, գիտնականներ. ծաղկեցին բաղաքները, զարգացան արվեստն ու գիտությունը: 20-րդ դարում ստեղծվցին բոլոր պայմանները լավ կյանքի համար ՝ հեռախոս , ռադիո , ինքնաթիռ , համակարգիչ , ճանապարհ բացվեց դեպի տիեզերք , իսկ արվեստը կարծես թե մղվեց երկրորդ պլան : Շատացան պատերազմները , ատելությունը, թշնամությունը :

Սակայն մարդկությունը միշտ պետք է սնվի արվեստով , իսկ եթե արվեստը , մշակույթը բարվոք մակարդակով չեն զարգանում , մեծապես տուժում է բաղաքակրթությունը : Երաժշտության ուսուցման նպատակն է աշակերտներին հաղորդել երաժշտական տարրական գիտելիքներ , ձևավորել երաժշտական բարձր ճաշակ , դաստիարակել լավ , ազնիվ մարդ հասարակության և շրջապատի համար :

Ուսուցումը պետք է հիմնավորված լինի ազգային արվեստի վրա : Վիճակագրությունը ցույց է տալիս , որ երաժշտությամբ զբաղվող մարդկանց շրջանում չկան ծանր հանցագործներ : Երաժշտության հետ շփումը պետք է սկսել փոքր տարիքից : Աշակերտների ականջը պետք է վարժվի լսել , ընկալել գեղեցիկ , բարձր որակի դասական , ժողովրդական երաժշտության : Այդ հարցում իր ուրույն և մեծ դերն ունի դպրոցը , որտեղ որպես արտադասարանական կազմակերպվում է երգչախումբ :

Երբ առաջին անգամ մեր դպրոցում որոշվեց , որ պիտի ձևավորվի դպրոցական երգչախումբ , թվում էր թե դա շատ հեշտ է : Պարզապես պետք էր ընտրել 15-20 լավ երգող աշակերտների , հավաքագրել և վերջ , երգչախումբը պատրաստ է : Բայց ոչ ...

Մինչ երգչախմբի ձևավորելը կատարեցի մի շարք հետազոտություններ : Նախ պետք էր հասկանալ թե ինչ է դպրոցական երգչախումբը , որն էր խմբային երգեցողության դաստիարակչական նշանակությունը , որն է երեխայի ձայնի և լսողության

առանձնահատկությունները , ինչպես պահպանել մանկական ձայնը , որն է շնչառության դերը երգեցողության մեջ և շատ ու շատ այլ գործոններ , որոնք նպաստում են ձևավորել ճիշտ դպրոցական երգչախումբ :

Երգչախումբ , դպրոցական երգչախումբ

Երգչախումբը երգիչներից կազմված խումբ է , բաղկացած ոչ պակաս 12 հոգուց , որոնք տիրապետում են խմբերգային երգեցողության տարբերին ու ոկալ – կատարողական տեխնիկային : Երգչախմբի ամենա փոքր կազմը բաղկացած է 12 մարդուց , սակայն այն կարող է ընդլայնվել մինչև 100 – 120 մարդ : Երգչախմբերը ըստ տեսակի լինում են միասեռ և երկսեռ (կամ խառը) և մանկական : Դրանք կարող են լինել միաձայն և բազմաձայն :

Դպրոցական երգչախումբ համարվում է արտադասարանական աշխատանքի ամենա կարևոր օղակներից մեկը : Դպրոցում գոյություն ունի երգեցողության 2 ձև .

1. Դասարանային , որը պաշտադիր է բոլորի համար
2. Արտադասարանային ՝ երգչախմբային :

Երգչախմբի առկայությունը խոսում է դպրոցի ուսուցման և դաստիարակմոն բարձր մակարդակի մասին : Դասարանային երգեցողությունը , որքան էլ որ բարձր աստիճանի վրա դրվի , երբեք չի կարող փոխարինել

դպրոցական երգչախմբին : Երգչախմբում աշակերտները կապվում են միմիանց , բարեկամանում , վերանում է ամաչկոտությունը :

Յուրաքանչյուր դպրոց կարող է ունենալ 2 երգչախումբ .

1. Փոքրերի ՝ կազմված տարրական դասարանների աշակերտներից (7-ից մինչև 11 տարեկան) :
2. Մեծերի՝ կազմված 5-րդ դասարանից սկսած մինչև բարձր դասարաններ (12 տարեկանից մինչև 16 տարեկան) :

Երգչախմբի պարապունքները պետք է լինեն սիստեմատիկ ՝ շաբաթական 2 անգամ : Տևողությունը փոքրերի հետ 45 րոպեից ոչ ավելի քանի որ նրանք շուտ են հոգնում , իսկ մեծերի հետ կարելի է պարապել ավելի երկար :

Դպրոցական երգչախումբը ղեկավարող ուսուցիչ – խմբավարը պետք է մանրակրկիտ ուսումնասիրի աշակերտների երաժշտական ընդունակությունները ՝

- լսողությունը
- ռիթմի զգացողությունը
- ձայնի որակը :

Ձայնի ստուգման համար առաջարկվում է երգել , որևէ երգ : Այդ ընթացքում պարզ է դառնում ոչ միայն երգողի ձայնի հնչողությունը , երանգը , ձայնածավալը , այլ նաև նրա լսողությունը , ռիթմի զգացողությունը : Աշակերտներին լսելուց հետո պետք է կատարել ձայնների բաժանում : Չի կարելի օգտագործել առաջին կամ երկրորդ ձայն հասկացողությունը , քանի որ բոլորն էլ ցանկանում են լինել առաջինի կարգավիճակում : Պարզապես պետք է ասել թե ովքեր են սոպրանոներ և ովքեր են ալտ :

Փոքրերի երգչախումբը կազմելիս պետք է ընդգրկել բոլոր ցանկացողներին , եթե անգամ նրանց լսողությունը զարգացած չէ : Պոտք չէ լինել շատ խստապահանջ փոքրերի նկատմամբ , որպեսզի նրանց մոտ հիասթափություն չառաջանա , քանի որ այդ տարիքում աշակերտների ճնշող մեծամասնությունը ճիշտ երգել

չգիտի : Իսկ ճիշտ պարապունքների շնորհիվ լսողությունը հետագայում զարգանում է ձայնը՝ մշակվում, աշակերտները սկսում են երգել ճիշտ ու հնչեղ :

Երգչախումբը կազմելուց հետո կարելի է ընտրել երգչախմբի ավագ և օգնականներ : Երգաչախումբը հետագայում դառնում է մեկ ընտանիք, որտեղ բոլորը հարգում, լսում են, զբաղվում են միևնույն գործով, աշխատում են լինել կարգապահ, միասնական, համախմբված ունում են մևնույն նպատակը, որը հետագայում բերում է մեծ հաջողությունների : Եթե աշակերտները փոքր տարիքից են սովորում ճիշտ երգել ապպա այդ նույն երեխաների հետ հետագայում մեծերի երգչախմբում աշխատելը հեշտ է :

Մեծերի երգչախումբը տարբերվում է փոքրերի երգչախմբից հետևյալ հատկանիշներով.

- Հնչողությամբ
- Երանգով
- Ձայնածավալով
- Ծրագրի բարդությամբ

Կապված տարիքի հետ երգչախմբի ձայնածավալը մեծանում է : Աշակերտների մոտ սկսվում է մուտացիոն շրջանը՝ տղաների և աղջիկների ձայնի երանգը փոփոխվում է : Տղաների ձայնը սկսում է հնչել կոպիտ, ավելի ցածր ձայնածավալում (բաս, տենոր), իսկ աղջիների ձայնը բարակում է, ձայնածավալը մեծանում է (ալտ, սոպրանո) : Սակայն որոշ մասնագետներ նույնիսկ կարծում են, որ մուտացիայի շրջանում ընդհանրապես պետք չէ երգել : Չնայած այս հարցը փոքր ինչ վիճելի է, քանի որ երգեցողության ընթացքում զարգանում է երգչային ձայնը : Ուղղակի պետք է մասնագիտորեն մոտենալ այդ հարցին՝ հետևելով ձայնի պահպանման կանոններին : Արդյունքում պետք է հասնել այն բանին, որ յուրաքանչյուր աշակերտ գիտակցի, որ մասնակցությունը դպրոցական երգչախմբին մեծ պատիվ է :

Երգչախմբային ծրագրի պահանջները և խմբերգային ստեղծագործության վերլուծությունը , ուսուցման ձևերը

Երգչախմբի կայունացման համար մեծ նշանակություն ունի երկացանկի ճիշտ ընտրությունը , քանի որ երգը հանդիսանում է երգչախմբի դեմքը : Պարապունքները պետք է սկսել պարզ , մատչելի երգերի ուսուցումից և աստիճանաբար բարդացնել : Դրանք պետք է լինեն բարձր արժեք ունեցող դասական , ժողովրդական, մանկական երգեր , որոնք աշակերտների մոտ ձևավորում են լավ հաճակ , ազգային մտածողություն : Հատուկ ուշադրություն պետք է դարձնել ազգային երաժշտությանը : Փոքր հասակից հայկական մեղեդին պետք է աշակերտների համար դառնա հոգեհարազատ : Երգչախմբի ծրագրում պոտք է պարտադիր ընդգրկվեն հայկական ժողովրդական և դասա կոմպոզիտորների խմբերգեր ՝ սկսած Կոմիտասից , Եկմալյանից մինչև ժամանակակից հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները : Ծրագիրը կազմելիս պետք է հաշվի առնել աշակերտների տարիքային առանձնահատկությունները , կարողությունները , հնարավորությունները :

Պարապունքները արդյունավետ անցկացնելու համար խմբավարը նախօրոք պետք է կատարի պարտիտուրի նախնական ուսումնասիրություն ՝ երաժշտական – տեսական և վոկալ կատարողական վերլուծություն : Նախ դաշնամուրի վրա պետք է

նվագել պարտիտուրը ՝ ուշադրություն դարձնելով կոմպոզիտորի կողմից նշված բոլոր ցուցումներին : Անհրաժեշտ է ծանոթանալ ինչպես ստեղծագործության երգահանին , այնպես էլ բանաստեղծին , ուսումնասիրել նրանց ստեղծագործական կյանքը , դարաշրջանը , շարադրելու ոճը : Պետք է վերլուծել գրական տեքստի բովանդակությունը , որից հետո միայն կատարել երաժշտատեսական վերլուծություն ՝ որոշելով տոնայնությունը , լադը , կառուցվածքը , ռիթմը , տեմպը , կուլմինացիայի տեղը , նախօրոք նշել շնչառության տեղերը , երգչախմբի տեսակը , ձևը , ձայների քանակը : Որոշել թե գլխավոր թեման , որ ձայնումէ անցնում , կամ մեղեդին , որ ձայնախմբում պոտք է հնչի ավելի ցայտուն և արտահայտիչ :

Խմբերգի ուսուցումը կարելի է բաժանել 2 փուլի .

- Ստեղծագործության յուրացման փուլ
- Գեղարվեստական կատարման փուլ :

Երգի ուսուցումը սկսելուց առաջ պետք է կատարել ձայնավարժություններ , երգեցողության թերությունները վերացնելուն , ձայնային ապարատը զարգացնելու համար : Ինչպես որվնվագելուց առաջ լարում են երաժշտական գործիքները ՝ ջութակը , թավ ջութակը , ֆանոնը , փողային գործիքները , այնպես էլ երգելուց առաջ անհրաժեշտ է լարել ձայնը : Ձայնըվլարվում է ձայնավարժությունների միջոցով :

VOKALIS – լատիներեն նշանակում է ձայնավոր : Վոկալ վարժությունները , որոնք կատարվում են հիմնականում ձայնավորներով , պետք է լինեն կարճ , հեշտ , մատչելի , և կատարվեն դասասկզբում 5 – 10 րոպե տևողությամբ : Խմբերգի ուսուցումը կարելի անցկացնել ամեն ձայնախմբում առանձին – առանձին : Ցանկալի է սկսել սոպրանոներից , որովհետև մեղեդին հիմնականում հնչում է նրանց մոտվ: Առանձին ձայնախմբերով ուսուցումից հետո պետք է բոլոր ձայնները միացնել :

Խմբերգի գեղարվեստական կատարման համար պահանջվում է շատ պարապունքներ , որ այն հնչի հետաքրքիր , հուզիչ , արտահայտիչ :

Երգչական ձայններ

Մինչև հասունացման տարիքը տղաների և աղջիկների ձայնների երանգները քիչ են տարբերվում իրարից : Այդ պատճառով մանկական ձայնները բաժանվում են ուղղակի բարձր ու ցածր ձայնների : Մանկական ձայնը ունի յուրահատուկ , գեղեցիկ ու հնչեղ երանգ : Նրան բնորոշ է << գլխային >> հնչողությունը ,

փոքր ձայնածվալը , թույլ ուժգնությունը : Մանկական բարձր ձայնը կոչվում է մանկական սոպրանո : Տղաների բարձր ձայնը կոչվում է դիսկանտ , ցածր ձայնը ՝ մանկական ալտ :

Մանկական ձայնի զարգացումը բաժանվում է 3 փուլի .

1. Առաջին փուլը սկսվում է փոքր հասակից մինչև 10 – ից 11 տարեկան
2. Երկրորդ փուլը սկսվում է 11 –ից մինչև 18 տարեկան
3. Երրորդ փուլը ՝ պատանեկան շրջան ՝ 14 տարեկանից մինչև 16 տարեկան :

Սա աշակերտների հասունացման շրջանն է , երբ ձայնը ենթարկվում է մուտացիայի :

Մուտացիա – լատ . բառ է , որը նշանակում է փոփոխություն : Այդ շրջանում մանկական ձայնի երանգը աստիճանավար ձգտում է փոխակերպման դեպի մեծահասակին բնորոշ ձայնային երանգը : Աղջիկների մոտ մուտացիայի շրջանը ավելի հանգիստ է անցնում , նրանց կոկորդը և ձայնալարերը մեծանում են 1 / 3 – ի չափով , ձայնի հնչողությունը բարակում է , ձայնածավալը մեծանում : Իսկ տղաների մոտ այդ փոփոխությունը կատարվում է կտրուկ , որովհետև կոկորդն ու ձայնալարերը աճում ու զարգանում են 1.5 – 2 անգամ : Ձայնը հաստանում է , ձայնածավալը իջնում : Այդ շրջանում աշակերտները երգելիս շատ են հոգնում , նրանց կոկորդը լարվում է , որոշ տղաների ձայնը նույնիսկ խզվում է : Նրանք սկսում են տարբերվել խմբերգային երգեցողության ժամանակ , ինչից ամաչում են : Այդ ժամանակ պետք չէ ուշադրություն դարձնել նրանց երգեցողությանը , որվհետև այդ տարիքում նրանք լինում են շատ զգայուն ու խոցելի , ուղղակի պետք է կարողանալ նրանց աստիճանաբար ներգրավել աշխատանքային պրոցեսի մեջ :

Ինչպես հայտնի է , երգային ձայնները բաժանվում են իգական (կանացի) ձայնների ՝ S (սոպրանո) , A (ալտ) և արական (տղամարդկանց) ձայնների ՝ T (տենոր) , B (բաս) : Կանացի բարձր ձայնը կոչվում է S (սոպրանո) :

Երգչախմբում սոպրանոնները գլխավոր ձայներն են , քանի որ երգերում երգում են մեղեդին : Կանացի ցածր ձայնը կոչվում է A (ալտ) : Այն լինում է 2 տեսակի ՝ մեցցո – սոպրանո և կոնտրալտո : Երգչախմբում մեցցո – սոպռանոները երգում են A^1 , իսկ կոնտրալտոները ՝ A^2 :

Տղամարդկանց ձայններն են՝ տենոր, բարիտոն, բաս։ Տենորը արական բարձր ձայնն է։ Բարիտոնը արական միջին ձայնն է, բասը արական ամենացածր ձայնն է։ Բասը երգչախմբի հնչողության հիմքն է, քանի որ նրա ձայնաբաժնի վրա է կառուցվում ստեղծագործության հարմոնիան։

ՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ԵՐԳԻՉՆԵՐ

Հայկանուշ Դանիելյան
(1893–1958)
Սոպրանո

Գոհար Գասպարյան
(1924–2007)
Բարձր սոպրանո
(կոլորատուրային)

Տաթևիկ
Սազանդարյան
(1916–1999)
Մեցցո սոպրանո (ալտ)

Ավագ Պետրոսյան
(1912–2000)
Տենոր



Պավել Լիսիցյան
(1911–2004)
Բարիտոն

Նար Հովհաննիսյան
(1913–1995)
Բաս

9

Շնչառությունը , կեցվածքը

երգեցողության ժամանակ

Ինչպես ասում էր 19 – րդ դարի երգարվեստի մեծ վարպետ Լամպերտին ՝ << Երգեցողության դպրոցը – շնչառության դպրոց է >> : Շնչառությունը երգեցողության հիմքն է , առանց որի հնարավոր չէ գեղեցիկ ձայնով երգել : Մարդու ձայնը բնատուր երաժշտական գործիք է , որը պետք է մշակել վաղ հասակից : Առանց շնչելու և արտաշնչելու հնչյուն արտաբերել հնարավոր չէ : Մանավանդ մանկական ձայնը նման է << հում հումքի >> , իսկ լավ մանկավարժը նրանց մոտ պետք է կարողանա ձևավորի ճիշտ ձայնադրում , ինչի արդյունքում հնչում է գեղեցիկ և արտահայտիչ երգեցողություն : Ուստի աշակերտներին պետք է սովորեցնել ճիշտ շնչել ու արտաշնչել : Երգելիս պետք է օգտագործել կրծքաստոծանային շնչառություն , որի ժամանակ պետք է որովայնն ու կրծքավանդակը միաժամանակ լցնել օդով : Այս դեպքում օդը թափանցում է թոքեր , սեղմում ստոծանին , որի արդյունքում վերջինս ընդունում է հորիզոնական դիրք , ձգվում և ուժեղանում են որովայնի հնշամկանները , արտափքվում են ստորին կողոսկրերը ինչի շնորհիվ հնարան է ստեղծվում ձայնի արտաբերման համար : Արտաշնչելիս օդը շփվում է ձուգահեռ դասավորված զույգ ձայնալարերի հետ , որոնք օդի ճնշումից սկսվում են տատանվել և առաջանում է հնչյուն : Ձայնալարերը շատ էլաստիկ են , նրանք երգելիս հեշտությամբ երկարում ու կարճանում , լայնանում ու նեղանում են երգելիս կոկորդում ձայնալարերի մկջև առաջանում է ուղղանկյունա ձև ձայնային ճեղք , որը ներշնչելիս լայնանում է , աչտաշնչելիս ՝ նեղանում :

Ճիշտ երգեցողության համար մեծ նշանակություն ունի նաև աշակերտների համապատասխան կեցվածքը : Երբ երգում են նստած դիրքով , մեջքը պետք է պահել ուղիղ , կարելի է մի փոքր հենվել աթոռին , գլուխը օահել ուղղ , ուսերը չբարձրացնել : Այս դիրքով լավ աշխատում է ստոծանին , շնչառությունը կատարվում է հանգիստ ու ճիշտ :

Արդեն յուրացված երգերը կարելի է կանգնած երգել : Այս դեպքում իրանը , գլուխը պետք է պահել ուղիղ , բերանը բացել կլոր , ձեռքերը պահել ներքևում : Կարևոր է նաև դեմքի միմիկան , աչքերի արտահայտությունը : Աշակերտբերը պետք է հետևեն մանկավարժի ձեռքերի ցուցումներին :

Խմբավարի մասնագիտական պատրաստվածությունը

Խմբավարի բարդ և պատասխանատու գործը ենթադրում է մասնագիտական գիտելիքների շարունակական զարգացում : Լավ տիրապետելով դիրիժորական տեխնիկային պետք է ունենա արտահայտիչ ձեռքեր , ղեկավարման պրոցեսին մասնակից դարձնելով նաև իրանը , աչքերը , դեմքը : Նա << մնջախաղի >> միջոցով իր դիմախաղով , ցայտուն ժեստերով արտահայտում է ստեղծագործության բնույթը , հուշում աշակերտներին իր պահանջները , վերացնում թերացումները : Նա գտնվում է աշակերտների ուշադրության կենտրոնում , ովքեր հետևում են նրա բոլոր շարժումներին , ցուցումներին : Ղեկավարելու ժամանակ 2 ձեռքն էլ կատարում են հիմնականում նույն շարժումները , բայց ամեն մի ձեռքն ունի իր ֆունկցիաները , որոնք իրար օգնում են և լրացնում : Աջ ձեռքը արտահայտում է ստեղծագործության մետրը , դաշնամուրի նվագակցությունը , տեմպը : Ձախ ձեռքը ցույց է տալիս ստեղծագործության ռիթմիկ պատկերը , արտահայտամիջոցների ճիշտ կատարումը : Ձախ ձեռքում կարծես թե կենտրոնանում և համախմբվում են երգչախմբի հնչողությունը : Խմբավարը պետք է ցայտուն ցույց տա շնչառությունը , հետևի երգիչների ձայնի որակին , տեմպին , առոգանությանը , ժամանակին ցույց տա տար եր ձայնների մուտքերը և ամենակարևորը կարողանա պահպանել երգչախմբի ընդհանուր անսամբլը : Խմբավարը պետք է լինի լավ երաժիշտ , բազմակողմանի զարգացած , լինի խորաթափանց հոգեբան , դերասան , հայրենասեր անձնավորություն :

Հայաստանում մանկական խմբերգային զարգացման գործում մեծ դեր ունի << Հայ փոքրիկ երգիչներ >> միջազգային ասոցացիան , որը ստեղծվել է 1992թ. Նոյեմբերի 6 – ին Երևանում : Ասոցացիայի հիմնադիրնու նախագահն է պրոֆեսոր Տիգրան Հեքեքյանը : Երգչախմբային արվեստի համաշխարհային ֆեդերացիայի կողմից ճանաչվել է աշխարհի լավագույն երգչախմբերից մեկը :

Երգեցողության խնդիրները

Երգեցողության ծրագրային հիմնական պահանջն է աշակերտներին սովորեցնել երգել ճիշտ , արտահայտիչ , գեղեցիկ , բնական ձայնով , որը ենթադրում է հետևյալ խնդիրները.

1. զարգացնել , մշակել երգչական ձայնը ՝ երգել ճիշտ , արտահայտիչ , բնական ձայնով
2. մշակել երգչական ունակություններ ՝ ճիշտ շնչառություն , պարզ առոգանություն , հնչյունների ճիշտ ու մաքուր վերարտադրություն , անսամբլի զգացողություն
3. զարգացնել երաժշտական ունակությունները ՝ երաժշտական լսողությունը , ռիթմը , հիշողությունը
4. ձևավորել սեր ու հետաքրքրություն երաժշտության նկատմամբ
5. սովորեցնել երգել խմբով , անհատական , նվագակցությամբ և առանց նվագակցության (A CAPELLA)
6. ձևավորել բարձր գեղարվեստական , երաժշտական հաշակ , ծանոթացնելով տարբեր բնույթի երգերին ՝ մանկական , ժողովրդական , դասական , էստրադայաին , ինչպես նաև ՝ ազգագրական ու հայրենասիրական
7. զարգացնել երաժշտականությունը
8. նպաստել ստեղծագործական ունակությունների բացահայտմանն ու զարգացմանը :

Խմբային երգեցողության դաստիարակչական նշանակությունը

Ռուս մեծ կոմպոզիտոր և մանկավարժ Դմիտրի Կաբալևսկին ասում էր .

<< Երաժշտության հանդեպ հետաքրքրությունը , հրապուրանքը և սերը պարտադիր պայմանն է , որպեսզի այն լայն բացահայտվի և նվիրի երեխաներին իր գեղեցկությունն ու կատարի իր դաստիարակչական ու ճանաչողական դերը >> :

Խմբային երգեցողությունը միավորում է աշակերտներին , նրանց մեջ ձևավորում կոլեկտիվի զգացողություն : Բոլոր երեխաներին (եթե նրանք խուլ կամ համր չեն) կարելի է սովորեցնել ճիշտ երգել , պարզապես պետք է հետևողական աշխատանք տան են ու համբերատար սպասեն արդյունքին : Բոլոր երախաները ունեն բնատուր որոշակի ձայնային ու լսողական ունակություններ : Կան երեխաներ , որոնք միանգամից երգում են ճիշտ ու մաքուր : Այդպիսիների մասին ասում են , որ նրանք ունեն երաժշտական լավ լսողություն : Եվ կան երեխաներ էլ , որոնք ուշադրություն չեն դարձնում հնչյունների բարձրությանը , չեն զգում նրանց տարբերությունը և երգում են արտասանելով : Բայց շնորհիվ ճիշտ պարաշուխների , ձեռք բերելով երաժշտական ունակություններ , երեխաները կարող են սովորել մաքուր վերարտադրել հնչյունները , երգել բնական ձայնով :

Երգը անմիջականորեն ազդելով զգացմունքների վրա ձևավորում է աշակերտների բարոյական կերպարը , բնավորության դրական գծերը : Նրանց մեջ արթնացնում է սեր դեպի հայրենիքը , պետությունը , բնությունը , շրջապատող մանդկանց , հարստացնում հոգևոր աշխարհը : Այսպիսով ՝ խմբային երգեցողությունը հանդիսանում է բարոյական դաստիարակության հզոր միջոց : Եվ ավելին , ազգայինից հետո դաստիարակությունը իրագործվում է շնորհիվ ժողովրդական , ազգագրական , հայրենասիրական երգերով :

Երգեցողությունը օգնում է նաև վերացնել լեզվական թերությունները , հարստացնում է բառապաշարը : Ըստ բժիշկների ՝ երգեցողությունը հանդիսանում է շնչառական մարմնամարզության լավագույն միջոցներից մեկը , քանի որ նպաստում է թոքերի և ձայնային ապարատի զարգացմանն ու ամրպնդմանը :

Երգչախումբը մի միջավայր է , որտեղ զարգանում է երեխաների երաժշտական ունակությունները : Եվ ցանկացած երգչախմբի նպատակն է սովորողների մոտ զարգացնել երգելու մշակույթ , որի շնորհիվ նրանց մոտ ձևավորվում է նաև լսելու կուլտուրան : Երգչախմբային արվեստը սովորողի

մոտ ձևավորում է ճիշտ մտածողություն , զարգացնում է լսողությունը , կողմինին լսելու և զուգահեռ ինքն իր թեման ճիշտ կատարելու կարողություն , երաժշտական ճաշակ :

Այսպիսով խմբային երգեցողությունը երաժշտական դաստիարակության կարևոր միջոցներից մեկն է , որը մեծ նշանակություն ունի աշակերտների բազմակողմանի հարմոնիկ զարգացման համար :

Եզրակացություն

Երաժշտությունը ինչպես մայրենի լեզուն , ազգի մտածողությունը , ինքն իր իմունիտետությունն ու գոյությունը պահող միջոց է : << Երաժշտություն >> առարկան դպրոցում դիտվում է , որպես արվեստի դասավանդման միջոց , որի հիմքում ազգայինում համամարդկային երաժշտությունն է , այն կրթության , դաստիարակության կարևոր բաղադրամասերից մեկն է , առանց , որի թերի կլինի ժամանակակից մարդու մտավոր և հոգևոր զարգացումը : Երաժշտական դաստիարակությունը նպաստում է ոչ միայն անհատի զարգացմանը և դրսևորմանը , այլև ազգային ու համամարդկային մշակույթի արժեքների յուրացմանն ու հաջորդ սերնդին փոխանցմանը : Երաժշտության միջոցով հնարավոր է դառնում ավելի արդյունավետ դարձնել կրթության և դաստիարակչության գործընթացն , որը մեր ժամանակի կարևոր պահանջներից մեկն է : Երաժշտությունը պարունակում է հսկայական կրթադաստիարակչական ներուժ ՝ միջ առարկայական կապեր ստեղծելով արվեստների և ֆիզիկական դաստիարակության , հումանիտար և բնագիտական առարկաների միջև : Երաժշտությունը մյուս առարկաներին դրական լիցք հաղորդելով նպաստում է սովորողների կարողություններոի ակտիվացմանը :

Ավարտելով իմ հետազոտական աշխատանքը կավելացն եմ հետևյալը . Իմ աշխատանքային գործունեության ընթացքում իմ նպատակն է եղել բարձրացնել << երաժշտություն >> առարկայի դերն ու նշանակությունը մեր կրթօջախում , աշակերտների մոտ ձևավորել սեր ու հետաքրքրություն երաժշտության հանդեպ , որ երբեք աշակերտները չհամարեն դա << երկրորդական >> առարկա : Եվ դա ինձ հաջողվել է , մանավանդ երբ ստեղծեցի իմ փոքրիկ երգչախումբը : Համոզված եղեմ ,

ճիշտ ձևավորելով դպրոցական երգչախումբ , կարող ենք բարձրացնել << երաժշտություն >> առարկայի դերն ու նշանակությունը հանրակրթական դպրոցներում : Դպրոցն էլ իր հերթին պոտք է ստեղծի անհրաժեշտ պայմաններ , որպեսզի աշակերտները սիրով մասնակցեն երգչախմբի պարապունքներին , որն էլ կհանգեցնի նրանց բազմակողմանի և ներդաշնակ զարգացմանը : Երգչախմբի առկայությունը խոսում է դպրոցիս ուսուցման և դաստիարակության բարձր մակարդակի մասին : Եվ յուրաքանչյուր աշակերտ պիտի հասկանա ու գիտակցի , որ մասնակցությունը դպրոցական երգչախմբում մեծ պատիվ է :

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. П.Г.Чесноков, << Хор и управление им >> , Гос. Муз. Издательство , Москва , 1952 .
2. В.Соколов , << Работа с хором >> , Издательство << Музыка >> , Москва , 1967.
3. Н.В.Романовский , << Хоровой словарь >> , Издательство << Музика >> , Ленинградское отделение , 1980 .
4. Մարտին Մամանյան , << Երաժշտության դասավանդման մեթոդիկա >> , << Լույս >> հրատարակչություն , 2003:
5. Ժ.Հարությունյան , << Մանկական երգչախմբի հետ աշխատելու մեթոդիկա >> , << Արեղ >> հրատարակչություն , 2003: